

գլուխ, խաչանիշ գունտ յաջում՝ եւ ծաղկեայ մական ՚ի ձախում, շուրջ գրեալ ԼԵՒՈՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ. ՚ի միւսում՝ առիծ թագեալ, ձող խաչագլուխ ՚ի թաթի, եւ շուրջ գրեալ դարձեալ: ԼԵՈՆ Ի ՔԷ՝ ԱՅ՝ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ. որպէս տեսանի ՚ի նախակարգեալ եւ ՚ի նախայիշեալ ճակատու Պատմագրութեանս (յեջ 435), համատիպ եւ համաչափ վաւերականին՝ որ պահի ՚ի հայրապետական դիւանս Հռովմայ:

Պատասխանիք թղթոցս ՚ի Քահանայապետէն տուեալ են յետ վեց ամսոց (՚ի 23 եւ 25 նոյեմբ. 1199). յորս՝ նախ յայտնէ զխնդութիւն եւ զգոհութիւն իւր վասն յօժարական միաբանութեան Հայոց ընդ եկեղեցւոյն Հռովմայ, զորոյ գերակայութիւն ջատագովէ երկար բանիւ. շնորհ ունի վասն մեծարելոյ նոցա զարքեպիսկոպոսն Մոզունտիոյ, որ մի է յեթանց ընթերակայից իւրոց եւ կարդինալ Սաբինայ, եւ ՚ի ձեռն նորա զինքն իսկ մեծարեալ. եւ առանձինն ինդայ ընդ Լեւոն՝ զի գրեալ էր եւ ՚ի կողմանս արեւելից վասն միաբանութեան եկեղեցեացն. եւ յորդորէ զսա արիաբար ախոյեան արձանանալ ընդդէմ անհաւատից, տալով նմա եւ կաթողիկոսին զաւետիս նորոյ Խաչակրութեան. եւ զի յիւրոց իսկ ձեռաց ընկալան զորոշն խաչանշան՝ երկոքին նուիրակք իւր, հանդերձեալք զալ յարեւելս:– Թէ որպիսի՝ ինչ գրեաց Լեւոն եւ առ կայսր Ռթոն կամ առ Փիլիպպոս Սուապ, (զի մեռեալ էր թագատու իւր Ենրիկ (1197), եւ երկոքին սոքա վիճէին վասն գահուն), խնդրելի է ՚ի դիւանս կայսերաց, եթէ գուցէ յոյս գիւտի, զի ցարդ չյայտնեցաւ ինչ. բայց զի Լեւոն առաքեաց դեսպան եւ յետ բազում ամաց առ Ռթոն կայսր, վկայէ եւ ինքն դեսպանն՝ Հեթում-Հեղի՝ եղբայր Ս. Լամբրունեցւոյն, յամի 1211:

Բ. Իննովկենտիոս Գ եւ Լեւոն

Յիշատակք կարգի բանիցս հրաւիրեն արդ դիմակարգել միմեանց առ մի նուագ՝ զԼեւոն եւ զՔահանայապետն Իննովկենտիոս, երկոքին՝ կարծեմ՝ վեհագոյն անձինք ՚ի վեհս ժամանակին, եւ արժանիք Մեծ կոչման. որպէս եւ ճանաչի իսկ յամենայն գրչաց այս Պապ, մի ՚ի զգօնագունից եւ հզօրագունից, որոյ նման սակաւք կացին յառաքելական գահուն. եւ յետ Գրիգորի Է, թղթակցի համանունն՝ մերումս Վկայասիրի, սա առաջին է բացափայլեալ տիրական զօրութեամբ. զոր եւ ճգնէր ցուցանել յաչս աշխարհի՝ գերագոյն յետ երկնաւոր զօրութեանն, եւ ստորակարգեալս փոխանորդին Քրիստոսի՝ զամենայն թագաւորս երկրի: